ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ

Թէլաւի Հայոց Եկեղեցական—Վիճակն երկսեռ ուսումնարանների 1886 թ. Սեպտեմբերի 1-ից մինչև 1887 թ. Սեպտեմբերի 1-ը։

—

ՄՈՒՏՔ

		Ռ.	Կ.
1.	Առ 1-ն Սեպտեմբերի 1886 ամի մնաց . .	2405	95
2.	Մոմավաճառութեան միամեայ արդիւնք . .	961	75
3.	Աշակերտուհիների թոշակադրամ . . .	714	70
4.	Աշակերտների թոշակադրամ	159	50
5.	Երկու եկեղեցիներից	180	»
6.	Ուխտատեղիներից	92	28
7.	Տների և կրպակների վարձ	234	»
8.	Ուսումնարանապատկան այգու արդիւնք . .	115	»
9.	Ձեռագործի վաճառումից	142	25
10.	Նուէր մի հանգուցեալի տէրերից . . .	6	»
11.	Տոկոսիք մայր գումարի	63	85
	Ընդ ամենը .	5075	28

ԵԼՔ

		Ռ.	Կ.
1.	Ուսուցիչների և վարժուհիների ռոճիկ . .	1500	»
2.	Ծառաների և մոմավաճառների ռոճիկ . .	264	»
3.	Վառելափայտ	100	»
4.	Գեռնահարկ այգիների և վարելահողերի . .	16	50
5.	Ուսումնարանները հրդեհի դէմ ապահովելու համար.	80	75
6.	Գարուսի և ձեռագործի իրեղէնների համար .	35	5
7.	Ուղարկուեցաւ Կոնսիստորի ի հաշիւ ռոճկի դպրոցական քարտուղարի հանդերձ փոստայի ծախիւք . .	50	32
8.	Ուսումնարանների և ուսումնարանապատկան շինութիւնների նորոգութեան վրայ այլ և զանազան մանր և անակնուելի ծախք	154	71
	Ընդ ամենը . .	2201	33

Ծախքը հանելով մուտքից մնում է առ 1 ն Սեպտեմբերի 1887 ամի երկու հազար ութ հարիւր եօթանասուն և երեք (2873) ռուբլի ինսուն և հինգ (95) կոպէկ։ Այս գումարից երկու հազար ռուբլին գանվում է շահեցողութեամբ Թիֆլիսի Փոխադարձ Վարկի ընկերութեան բանկայում ընդ

№ № 52, 795 և 53, 324, իսկ մնացեալ գումարի մի մասով կառավարվում է մոմի պահեստը, միւս մասը, իբրև առձեռն պատրաստի դրամ, գտնվում է գանձապահ Հոգաբարձուի՝ պ. Գասպար Մղդեսեանի ձեռքում ընթացիկ ծախսերի համար։

Ներկայացնելով յարգելի խմբագրութեանդ այս համառօտ հաշիւը՝ պատիւ ունիմ յայտնել և այն որ սա միայն քաղուածք է Վիճակային Կոնսիստորիայից ինձ տրուած ժապաւէնեալ մատեանից, որտեղ մանրամասնաբար յականէ յանուանէ, կոպէկ առ կոպէկ ճշտութեամբ մուծուած է բոլոր ել ու մուտքը։ Ամենայն տարի ուղարկել եմ Կոնսիստորիայի վերադարձնութիւն, տպագրել եմ տուել յարգելի «Արարատ»-իդ մէջ և մինչև անգամ կարդացել եմ խուռն բազմութեան ներկայութեամբ Ս. Վարդանանց տօնի օրը։

Գէորգ Աւագ քհնյ. Տէր Սարգսեանց

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԳԻՐ — ՄՆԱՑՈՒՆ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ

ՑՈՎՍԷՓԱՑ ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻՆ,

Սահակ—Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութիւնն՝ զոր Բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանց հաստատած է, պիտի կատարի յառաջիկայ 1888 տարւոյ Սրբոց Թարգմանչաց տօնի օրն։ Հետևապէս Գործագիր—Մնայուն Ցանձնաժողովս կփութայ այսու Յայտարարութեամբ վերստին հրաւիրել այն հեղինակներն ու բանասէրներն որ ունին Ազգային լեզուաքննութեան և պատմութեան վերաբերեալ երկասիրութիւններ։ Ձեռագիր կամ տպագիր, և կըփափագին մասնակցիլ մրցանակաբաշխութեան, փութան յուղարկել զայնս առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն, ի Կ. Պոլիս, մինչև յառաջիկայ տարւոյ Յունվարի սկիզբն։

Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ յուղարկուին։